

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ



Լրացավ անվանի գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հասարակական-քաղաքական գործիչ Գեվորգ Բագրատի Ղարիբջանյանի իննսուն ամյակը: Վաստակաշատ գիտնական ու ճանաչված մտավորական Գ. Ղարիբջանյանի կյանքի տարեգրությունը արգասաբեր ու շնորհաշատ պատմաբանի կենսագրություն է:

Գ. Ղարիբջանյանը ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի) քաղաքում, հեղափոխական, մանկավարժ և հրապարակախոս Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքում: 1937 թ. ավարտել է Երևանի Կրուպսկայայի անվան դպրոցը: 1937-1941 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում:

1941-1948 թթ. Գ. Ղարիբջանյանը ծառայել է բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, երկու անգամ վիրավորվել է: Ջորաջովելուց հետո կատարել է կոմերիտական ու կուսակցական ղեկավար աշխատանքներ: 1948-1950 թթ. եղել է Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի քարտուղար, 1951-1954 թթ.՝ ԽՄԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ԽՄԿԿ պատմության բաժանմունքի վարիչ, 1968-1977 թթ.՝ նույն մասնաճյուղի տնօրեն, 1954-1961 թթ.՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, դպրոցական բաժնի վարիչ, գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի տեղակալ, իսկ 1961-1968 թթ.՝ ՀԿԿ Լենինականի (այժմ՝ Գյումրի) քաղկոմի առաջին քարտուղար:

1948 թ. Գ. Ղարիբջանյանը պաշտպանել է թեկնածուական, 1955 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1957 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1965 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1971 թ.՝ ակադեմիկոս: 1965-1976 թթ. ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրությանն առընթեր բարձրագույն որակավորման հանձնաժողովի անդամ էր: 1968 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչում: 1977-1982 թթ. եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԳԱ նախագահության անդամ: 1954-1981 թթ. ՀԿԿ կենտկոմի անդամ էր, 1966-1969 թթ.՝ կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

Գիտական աշխատանքը նա հմտորեն զուգակցել է մանկավարժական, գիտակազմակերպչական և կուսակցական աշխատանքին: 1985 թ. մինչև կյանքի վերջը ղեկավարել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական տեղեկատվության կենտրոնը: Եղել է ԽՄԿԿ XXII և XXIII համագումարների, ԽՍՀՄ VI-VII, ՀԽՍՀ VIII-IX գումարումների Գերագույն

խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ ԳԱ միջազգային բանվորական և ազգային ազատագրական շարժումների հիմնախնդիրների հայկական բաժանմունքի և ՀԽՍՀ ԳԱ նախագահությանը կից ժամանակակից քաղաքական հոսանքների հիմնախնդիրների գիտական խորհուրդների, Հայկական Սովետական Հանրազգիտարանի գլխավոր խմբագրության անդամ:

Մեծ են Գ. Ղարիբջանյանի ծառայությունները հանրապետությունում և նրա սահմաններից դուրս գիտական կադրերի պատրաստման գործում: 1947-1999 թթ. նա դասախոսել է ԵՊՀ-ում և հանրապետության այլ բուհերում՝ բժշկական, պոլիտեխնիկական ինստիտուտներում, կուսակցական դպրոցում: Նրա դասախոսությունները հազեցած էին վերլուծական ներուժով և ունեին գիտական բարձր մակարդակ: Գ. Ղարիբջանյանը ԽՍՀՄ գրողների միության, ժուռնալիստների միության և ՀԽՍՀ փիլիսոփայական ընկերության անդամ էր, «Գիտելիք» հանրապետական ընկերության վարչության նախագահի տեղակալ, խորհրդա-հունգարական բարեկամության ընկերության Հայկական բաժանմունքի նախագահ, «Զորավար Անդրանիկ» հայոց համազգային միության հիմնադիր-նախագահ: Գ. Ղարիբջանյանը պատմագիտության խորհրդային շրջանի վաստակաշատ ներկայացուցիչներից է: Նրա գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփված են 350-ից ավելի աշխատություններում (60 գիրք ու գրքույկներ, 300-ի հասնող գիտական ու հրապարակախոսական հոդվածներ), որոնք նվիրված են հայոց նոր և նորագույն շրջանի պատմությանը, հատկապես հայ ազգային-ազատագրական ու հեղափոխական շարժումների մի շարք կարևոր հիմնախնդիրների: Խորը և բազմակողմանի գիտելիքները, միանգամայն ինքնուրույն դատողությունները, տրամաբանական եզրակացություններ անելու ունակությունները նշանավոր հայագետին հնարավորություն են տվել քննվող հարցերին մոտենալ նորովի հարցադրումներով:

Հենց քննական ու վերլուծական կարողությունների, անսպառ աշխատասիրության շնորհիվ է գիտնականը զբաղվել հայոց պատմության տարբեր փուլերով՝ մասնավորապես նոր և նորագույն շրջանի մի շարք հիմնախնդիրներով:

Հսկայական է Գ. Ղարիբջանյանի ավանդը հայ ժողովրդի անցյալի և ժամանակակից պատմության մի շարք հիմնախնդիրների մեկնաբանման գործում: Հարկ է նշել, որ նրա մի շարք գործեր՝ «Լենինը և Անդրկովկասը» (մաս 1-3, Ե., 1970-1975), «Ստեփան Շահումյան» (1978), «Ալեքսանդր Մյասնիկյան» (1976), «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» (1986), «Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամության պատմության» (1982), «Ավարայրից մինչև Սարդարապատ» (1985), «Ավետիք Բսահակյան» (1983), «Ժողովրդական հերոս Անդրանիկը» (1990), «Հայոց ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը» (1995), «Գերմանիան, Հայկական հարցը և Հայոց ցեղասպանությունը» (1997) և այլն, աչքի են ընկնում ոչ միայն աղբյուրագիտական լայն ընդգրկումներով, այլև ուրույն մեկնաբանություններով: Գ. Ղարիբջանյանի աշխատությունները հրապարակվել են նաև օտար լեզուներով:

Մարտական և աշխատանքային ծառայությունների համար Գ. Ղարիբջանյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի I աստիճանի, Աշխատանքային կարմիր դրոշի (2), Պատվո նշան, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով, ինչպես նաև արժանացել է ԽՍՀՄ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահության բարձրագույն պարգևի՝ Ս. Ի. Վավիլովի անվան մեդալի, Խ. Աբով-

յանի անվան մեդալի, «Ոսկե պսակ» պատվո ճշանի, Ստ. Շահումյանի անվան մրցանակի:

Գ. Ղարիբջանյանը վախճանվել է 1999 թ. դեկտեմբերի 28-ին, Երևանում: Երջանկահիշատակ աղաղակիկոս Գ. Ղարիբջանյանը մտավորականի բարձր տիպար էր, մարդամոտ, բարյացակամ ու կենսախինդ անհատ:

Աղաղակիկոս Գևորգ Ղարիբջանյանի գիտական բեղուն և հասարակական ակտիվ գործունեությունը գիտությանը և հասարակությանը անմնացորդ նվիրվելու լավագույն օրինակ է, առավելապես՝ երիտասարդության համար:

ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.

Պատմական գիտությունների դոկտոր